ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ինովացիայի վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 5.2 Փորձնական հետազոտության պլանավորում

Առաքելության փորձագետներ

Տիկին Մերվի Նիեմի, Ֆինլանդիայի վիճակագրություն
Պարոն Գեդիմինաս Սամուոլիս, Լիտվայի վիճակագրություն

2016թ. փետրվարի 22-26

Վերջնական տարբերակ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Փորձագետների կոնտակտային տվյալներ

Մերվի Նիեմի
Ֆինլանդիայի վիճակագրություն
Työpajankatu 13
FIN-00022 Ֆինլանդիայի վիճակագրություն
Ֆինլանդիա
Հեռ.՝ +358 29 551 1000
Էլ. փոստ՝ Mervi.Niemi@stat.fi

Գեդիմինաս Սամուոլիս
Լիտվայի վիճակագրություն
Gedimino av. 29
LT-01500 Լիտվա
Լիտվա
Հեռ.՝ +370 5 2364 621
Էլ. փոստ՝ Gediminas.Samuolis@stat.gov.lt

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Գնահատում և արդյունքներ 4
2.1. Հնարավոր ցուցանիշների ցանկի մշակում 5
2.2. Նախագծված հարցաթերթի մշակում 6
2.3. Թիրախային և շրջանակային համակցության նույնականացում 8
2.4. Ընտրանքի նույնականացում 9
2.5. Հետազոտության պլանավորում և նախագծում 9
2.6. Տվյալների հավաքագրման մեթոդների նույնականացում 10
2.7. Վարչական աղբյուրների օգտագործման վերաբերյալ քննարկում 10
2.8. Քննարկումներում համապատասխան շահառուների ներգրավում 11
3. Եզրակացություններ և առաջարկություններ 12
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 13
Հավելված 2. Առաքելության ծրագիր 15
Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ 17

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ԵՏՄ	Եվրասիական մաքսային միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՇԵ	Շահառու երկիր
ԱԵ	Անդամ երկիր
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ԳՏԻ	Գիտություն, տեխնոլոգիա և ինովացիա

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության վերաբերյալ սույն հաշվետվությունը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա հինգերորդ բաղադրիչի մասով երկրորդ առաքելությունն էր, որն իրականացվել է առաքելության ծրագրի ժամանակացույցի համաձայն:

Գործողության նպատակներն էին՝

- Հնարավոր ցուցանիշների ցանկի մշակում
- Նախագծված հարցաթերթի մշակում
- Թիրախային և շրջանակային համակցության նույնականացում
- Ընտրանքի նույնականացում
- Հետազոտության պլանավորում և նախագծում
- Տվյալների հավաքագրման մեթոդների նույնականացում
- Վարչական աղբյուրների օգտագործման վերաբերյալ քննարկում
- Քննարկումներում համապատասխան շահառուների ներգրավում

Պլանավորված գործողություններն իրականացվել են, և ակնկալվող արդյունքը ստացվել է:

Փորձագետներն իրենց անկեղծ երախտիքն են հայտնում բոլոր պաշտոնյաներին և անձանց՝ Հայաստան կատարած այցի ընթացքում աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, ինչը մեծապես նպաստել է իրենց աշխատանքին: Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են փորձագետներին և պարտադիր չէ, որ համընկնեն ԵՄ, ՀՀ ԱՎԾ, Լիտվայի, Ֆինլանդիայի և Դանիայի վիճակագրական ծառայությունների կարծիքների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

Ընթացիկ իրավիճակի գնահատում

- Ցուցանիշները սահմանված են,
- Հարցաշարը նախագծված է,
- Թիրախային և շրջանակային համակցությունը նույնականացված է,
- Ընտրանքը նույնականացված է,
- Հետազոտությունը պլանավորված և նախագծված է,
- Տվյալների հավաքագրման մեթոդները նույնականացված են,
- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիրը պլանավորված է (գործողություն 5.3-ը՝ ուսուցողական այց դեպի Ֆինլանդիայի

վիճակագրություն, ծրագրված է 2016թ. հունիսին, իսկ երրորդ առաքելությունը (5.4) Հայաստան՝ 2016թ. հոկտեմբեր ամսին):

2.1. Հնարավոր ցուցանիշների ցանկի մշակում

Ցուցանիշների սահմանման և Հայաստանում ինովացիայի թեմայով փորձնական հետազոտության հարցաթերթի նախագծման համար ելակետային է հանդիսացել ինովացիայի վիճակագրության մասին ԵՄ կանոնակարգը և մոդելային «Համայնքի ինովացիայի հետազոտություն 2014» հարցաթերթը, որը ԵՄ մոդելային ամենավերջին հասանելի հարցաթերթն է:

Ինովացիայի վիճակագրության հիմնական ցուցանիշները սահմանված են ԵՄ հանձնաժողովի թիվ 995/2012 կանոնակարգում՝ իրականացնելով Եվրոպական խորհրդարանի և խորհրդի թիվ 1608/2003/ԵՀ որոշումը, որը վերաբերում է գիտության և տեխնոլոգիայի գծով համայնքային վիճակագրության արտադրմանն ու մշակմանը (փակագծերում նշված է կապը ՀՀ փորձնական հարցաթերթում առկա հարցի համարին):

1. Ինովացիոն կազմակերպություններ (3.1, 4.1, 5.1, 9.1 և 10.1 հարցեր)
2. Ինովացիոն կազմակերպություններ, որոնք ծանոթացրել են շուկայում նոր կամ նշանակալիորեն կատարելագործված արտադրանք (Հարց 3.3.1)
3. Շուկայի համար նոր կամ նշանակալիորեն կատարելագործված արտադրանքի ինովացիայով ինովացիայով պայմանավորված շրջանառություն (Հարց 3.3.3)
4. Միայն ընկերության, այլ ոչ շուկայի համար նոր կամ նշանակալիորեն կատարելագործված ինովացիայով պայմանավորված շրջանառություն (Հարց 3.3.4)
5. Ինովացիոն համագործակցություն ծավալած ինովացիոն կազմակերպություններ (Հարց 8.1)
6. Ինովացիոն ծախսեր (Հարց 6.2)
7. Ինովացիոն կազմակերպություններ, որոնք նշել են ինովացիայի չափազանց կարևոր ազդեցությունները
8. Ինովացիոն կազմակերպություններ, որոնք նշել են ինովացիայի համար չափազանց կարևոր տեղեկատվության աղբյուրները
9. Կազմակեպություններ, որոնք բախվում են ինովացիոն գործունեությանը խոչընդոտող գործոնների (Հարց 11)
10. Կազմակեպություններ, որոնք ինովացիա են մշակել ինքնուրույն կամ այլ կազմակերպությունների/կառույցների հետ (3.2.1; 3.2.2, 4.2.1. և 4.2.2 հարցեր)

7-րդ և 8-րդ ցուցանիշներին առնչվող հարցերը ներկայացվեցին ՀՀ ԱՎԾ-ին, սակայն չընդգրկվեցին՝ հաշվի առնելով փորձնական հարցաթերթի ծավալը: Դրանք կարող են ներառվել հետագա հետազոտություններում:

2.2. Նախագծված հարցաթերթի մշակում

Նոր հարցաթերթը պետք է համապատասխանի միջազգային հարցաթերթերի կառուցվածքային դրույթներին: Այն պետք է ունենա պարզ, տրամաբանական և մոդուլային կառուցվածք: Ֆիլտրող հարցերի կիրառումը կարող է նվազեցնել ռեսպոնդենտների բեռը:

ԱԵ փորձագետներն առաջարկում են իրականացնել եվրոպական ներդաշնակեցված հարցումը ինովացիայի թեմայով՝ ընդգրկելով մեթոդաբանական և որակական ուղեցույցներ, հաշվի առնելով հնարավոր ազգային առանձնահատկությունները, որոնք պետք է սահմանվեն շահառուների և ինովացիոն տվյալների սպառողների հետ համատեղ:

Առաքելության ընթացքում հարցաթերթը հարց առ հարց վերլուծվեց՝ նպատակ ունենալով հասկանալ կարիքները: Առաջին առաքելությունից հետո ՀՀ ԱՎԾ-ն հետաքրքիր առաջարկներ էր կատարել հարցաթերթի վերաբերյալ (հիմնված սպառողների կարիքների վրա), մասնավորապես՝ իրականացված ինովացիոն արտադրանքի կամ գործընթացի օրինակների մասին հարցեր ավելացնելը: ԱԵ փորձագետները պարզաբանեցին յուրաքանչյուր հարցի կարգավիճակը (արդյո՞ք հարցը պարտադիր է ԵՄ երկրներում, արդյո՞ք նշված է ԵՄ կանոնակարգում, և այլն), ինչպես նաև մեկնաբանություններ և առաջարկություններ արեցին որոշակի հարցերի կարևորության շուրջ: Նպատակն էր անդրադառնալ բոլոր պարտադիր և էական հարցերին (այսինքն՝ պարտադիր համայնքի ինովացիոն հետազոտություն իրականացնող երկրների համար), միևնույն ժամանակ անդրադարձ կատարելով Հայաստանի համար կարևոր հարցերին:

Հանգամանորեն քննարկվեցին հատուկ հարցեր և մարտահրավերներ, մասնավորապես՝ R&D-ի վերաբերյալ առանձին հարց ունենալու հնարավորությունը (որոշվեց «ոչ», քանի որ ինովացիոն գործունեության վերաբերյալ հարցն անդրադառնում է դրան): Որոշ հարցեր «բաց» մնացին՝ երեքշաբթի օրը կայանալիք շահառուների հետ հանդիպման ժամանակ կարծիքներ լսելու ակնկալիքով: Այդ հարցերի կարևորությունը կախված էր Հայաստնաի համատեքստում դրանց նշանակության աստիճանից:

Ակներև մարտահրավեր է ռեսուրսների հասանելիությունը: Սահմանափակ ռեսուրսները կարող են ազդել փորձնական հետազոտության համար կատարված ընտրությունների վրա, երբ խոսքը վերաբերում է հետազոտության բովանդակությանը կամ ընտրանքի չափին: Այս ամենը պետք է հաշվի առնել հարցաթերթի վերջնական բովանդակությունը որոշելիս: Հարցաթերթի երկարությունը պետք է ընդունելի լինի նաև այս տեսանկյունից:

Երեքշաբթի օրը շահառուների հանդիպմանը ներկա էին շատ կարևոր գործընկերներ և տվյալների սպառողներ Մտավոր սեփականության

գործակալությունից, ՀՀ գիտության ազգային ակադեմիայից, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեից: ՀՀ ԱՎԾ-ն մասնակիցներին նախապես ուղարկել էր հարցաթերթի նախնական տարբերակը, իսկ հանդիպման ընթացքում հարց առ հարց աչքի անցկացվեց փոփոխված տարբերակը: Քննարկումը չափազանց արդյունավետ էր և օգտակար, իսկ ՀՀ ԱՎԾ-ի և շահառուների համագործակցությունը՝ բավական ակտիվ, ինչը շատ արժեքավոր է վիճակագրության համար: ԱԵ փորձագետները առաջարկեցին ավելի կրճատել հարցաթերթը՝ հաշվի առնելով ռեսուրսները և ոչ պարտադիր հետազոտություններին պատասխանելու պատրաստակամության անորոշությունը: Փորձնական հետազոտության համար ոչ անհրաժեշտ հարցերը հանվեցին: Ավելի լավ է ունենալ քիչ հարցեր, բայց բոլոր հիմնականները և ստանալ պատասխաններ, քան ունենալ չափազանց երկար հարցաթերթ առանց պատասխանների: Ինովացիան և ինովացիոն գործունեությունը սահմանելու խնդիրը ամեն դեպքում խրթին կլինի ռեսպոնդենտների համար՝ հատկապես երբ հարցը տրվում է առաջին անգամ:

Շահառուների հետ հանդիպումից հետո ՀՀ ԱՎԾ-ն վերջնական տեսքի բերեց հարցաթերթի հաջորդ տարբերակը: Այս փուլում փորձնական հարցաթերթը շատ ամփոմփ տեսք ուներ և բավականչափ կարճ էր ռեսպոնդենտների կողմից ընդունելի լինելու և նրանցից տվյալներ ստանալու համար: Այժմ հարցաթերթը անդրադառնում էր ԵՄ շրջանակի հիմնական հարցերին և Հայաստանի համար ամենակարևոր ասպեկտին: ԵՄ շրջանակից ներկայացված և քննարկված այլ հարցեր մնացին հետագա օգտագործման փուլում և կարող են ներառվել առաջիկա հետազոտություններում:

ՀՀ ԱՎԾ կողմից առաջարկված հարցաթերթը համապատասխանում է ԵՄ հարցաթերթի կառուցվածքային դրույթներին: Այն ունի պարզ, տրամաբանական և մոդուլային կառուցվածք, իսկ ֆիլտրող հարցերի առկայությունը նվազեցնում է ռեսպոնդենտների բեռը: Հետազոտության հարցերը ևս մեկ անգամ ոճականորեն դիտարկվեցին և նախքան առաքելության ավարտը պատրաստ էին: Կազմվեցին վերջնական տարբերակները հայերեն և անգլերեն լեզուներով, իսկ անգլերենը տրամադրվեց ԱԵ փորձագետներին խմբագրական կանոնները պլանավորելու համար:

Կազմակերպություններին ուղարկելիս հարցաթերթին պետք է կցվի հստակ սահմանումների և բացատրությունների ուղեցույց, օրինակ՝ տեխնիկական տերմինների պարզաբանմամբ: Քննարկվեց սահմանումների և ուղեցույցի հետագա անհրաժեշտության հարցը: ՀՀ ԱՎԾ-ն կարող է օգտագործել իր ունեցած նյութը, իսկ R&D-ի համար կիրառել նույն սահմանումները, ինչ հանրային ոլորտի R&D հետազոտության համար:

Նաև պարզվեց, որ Հայաստանում ակնկալվում է ինովացիոն հետազոտությունը կիրառել հանրային ոլորտում: Սույն ծրագրի ուշադրության կենտրոնում բիզնես ոլորտի կազմակերպություններն են՝ համաձայն միջազգային

ստանդարտների և ուղեցույցների: Հանրային ոլորտի ինովացիան այլ ծրագրերի խնդիրն է: Ներկայումս չկան հանրային ոլորտի ինովացիոն գործունեության համար վիճակագրական տվյալների հավաքագրման միջազգային ուղեցույցներ: Այնուամենայնիվ, այս հարցը կարող է լինել հունիսին դեպի Ֆինլանդիա նախանշված ուսուցողական այցի օրակարգում: Ֆինլանդիայի վիճակագրությունը մեկ անգամ փորձարկել է հանրային ոլորտի ինովացիայի հետազոտություն որպես Սկանդինավյան ծրագրի մաս (շուրջ 5-6 տարի առաջ), հետևաբար այս փորձառությունը և ընթացիկ միջազգային իրավիճակը կարելի է հակիրճ քննարկել ուսուցողական այցի ժամանակ:

2.3. Թիրախային և շրջանակային համակցության նույնականացում

Հետազոտության թիրախ են հանդիսանում Հայաստանում գործող կազմակերպությունները, իսկ ընտրանքի շրջանակը պետք է կառուցել ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստի հիման վրա: ԵՄ հետազոտության շրջանակի նման այն կարող է ընդգրկել կազմակերպություններ, որոնք ունեն առնվազն 10 կամ ավելի աշխատակիցներ:

ՀՀ ԱՎԾ-ի բիզնես ռեգիստր բաժնի աշխատակիցը ներկայացրեց կազմակերպությունների համացանկը: ԱԵ փորձագետներն առաջարկեցին և ՀՀ ԱՎԾ աշխատակիցները համաձայնվեցին հետևել տնտեսական գործունեության միջազգային դասակարգմանը (NACE rev. 2) և կազմակերպության չափին (աշխատակիցների քանակ): Ըստ շրջանների շերտավորման նախատեսվում է տեղեկատվություն հավաքագրել Երևանից և ՀՀ այլ մարզերից, քանի որ Երևանը մեծ ազդեցություն ունի երկրի տնտեսական վիճակի վրա:

ԱՊՀ հետազոտության շրջանակի նման այն պետք է ընդգրկի կազմակերպություններ, որոնք ունեն առնվազն 10 կամ ավելի աշխատակիցներ: Հետազոտության չափի դասակարգումը (ըստ աշխատակիցների քանակի)՝ 10 – 49; 50 – 249 և 250 կամ ավելի: Աշխատակիցների քանակը սահմանվում է տարեկան միջինով:

Ինչ վերաբերում է տնտեսական գործունեության դասերին (NACE rev. 2), առաջարկվում է 2 թվային դասակարգումներ թիրախային համակցության մեջ և տնտեսական գործունեության լրացուցիչ դասեր, որոնք կարևոր են ՀՀ-ի համար և համատեղելի ՀՀ գիտության պետական կոմիտեի տեսանկյունից:

Ռեսուրսների սղության պայմաններում ԱԵ փորձագետներն առաջարկում են կառուցել ընտրանքը տնտեսական ակտիվության խմբի հիման վրա, որը նշված է ԵՄ հանձնաժողովի թիվ 995/2012 կանոնակարգի 6-րդ բաժնի հավելված II-ում՝ իրականացնելով Եվրոպական խորհրդարանի և խորհրդի թիվ 1608/2003/ԵՀ որոշումը:

2.4. Ընտրանքի նույնականացում

Ընտրանքի չափը պետք է որոշվի սպառողների կարիքների և առկա ռեսուրսների հավասարակշռմամբ: ԱԵ փորձագետներն ընդգծեցին, որ ընտրանքը ինովացիայի տեսանկյունից պետք է ներկայացուցչական լինի թիրախային և շրջանակային համակցության համար և պետք է ընդգրկի ոչ միայն ինովացիոն, այլև ոչ ինովացիոն կազմակերպություններ:

Առաջարկվում է ձևավորել պատահական շերտավորված ընտրանք հետազոտության համար: Ընտրանքի կառուցվածքը և չափը պետք է պատշաճ լինի մոդելային հարցաթերթի փոփոխականների և կետերի վերաբերյալ ճշտգրիտ, արժանահավատ և ներկայացուցչական արդյունքներ ստանալու համար: Այդ նպատակը պետք է հասանելի լինի ոչ միայն ողջ համամասնության, այլև տարբեր բաժանումների պարագայում:

Ակնկալվում է, որ Բիզնես ռեգիստրի բաժինը կօժանդակի Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին համակցության տրամադրման և ընտրանքի հարցերում: Բիզնես ռեգիստրի բաժինը կարող է ստանալ ընտրանքն առանց շրջանակի սահմանման հետ կապված խնդիրների առնչվելու:

2.5. Հետազոտության պլանավորում և նախագծում

Առաքելության ավարտին հարցաթերթն ու հետազոտության ընտրանքը ճիշտ ուղու վրա էին: Հարցաթերթը և ընտրանքը վերջնական տեսքի բերելուց հետո (կրկին ստուգել ֆիլտրերը և այլն) հաջորդ քայլը տվյալների հավաքագրման հետագա նախապատրաստումն է (ուղեկցող նամակ և այլն): Տվյալների հավաքագրման և տեխնիկական լուծումների մեթոդների և մեթոդաբանության ընտրությունը կախված է ՀՀ ԱՎԾ համակարգերից և սահմանված կարգից:

Մի շարք վերջնաժամկետներ համատեղ քննարկվեցին և հաստատվեցին: ՀՀ ԱՎԾ-ն կիրականացնի տվյալների հավաքագրումը գարնանը, որպեսզի տվյալները (չմշակված) հասանելի լինեն մայիսի վերջին:

Ըստ նախնական աշխատանքային ծրագրի ֆորմալ և տրամաբանական հսկողությունները դիտարկվելու էին գործողություն 5.4-ի շրջանակներում: Սակայն լավ կլինի խմբագրման կանոններին անդրադառնալ ավելի վաղ, որպեսզի լիովին խմբագրված վերջնական տվյալները հասանելի լինեն աշնանը՝ գործողություն 5.4-ին ընդառաջ: Այդ պատճառով մայիսի վերջը սահմանվեց որպես չմշակված տվյալների ստացման վերջնաժամկետ: Նաև որոշվեց խմբագրման կանոններին անդրադառնալ ուսուցողական այցի ժամանակ:

2016թ. սեպտեմբերի վերջը մեկ այլ կարևոր վերջնաժամկետ է արդեն խմբագրված տվյալների համար: Վերջնաժամկետը սահմանվել է աշխատանքային ծրագրի և առաջիկա գործողություն 5.4-ի համաձայն, որի ընթացքում կատարվելու է որոշակի տվյալների վերլուծություն:

2.6. Տվյալների հավաքագրման մեթեդների նույնականացում

Առաքելության ժամանակ ռեսուրսների հարցը հստակորեն չպարզաբանվեց, սակայն նշվեց դրանց սահմանափակ լինելու հանգամանքը: Բիզնես ոլորտի կազմակերպությունների ինովացիայի հետազոտությունը բավական լայնածավալ է և պահանջում է նշանակալի մարդկային ռեսուրսներ առկայություն տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության և հրապարակման փուլերում: Եթե ռեսպոնդենտ կազմակերպությունը դժվարանում է հարցաթերթը լրացնելու գործում, անհրաժեշտ է նրան օգնություն տրամադրել, ինչը պահանջում է ռեսուրսներ:

Առաքելության ընթացքում քննարկվեցին տվյալների հավաքագրման տարբեր մեթոդներ՝ էլեկտրոնային հարցում, փոստային հարցում, հարցազրույցներ, բայց վերջնական որոշումը կախված է հասանելի ռեսուրսներից:

Սահմանափակ ռեսուրսների պարագայում փոստային հարցումը թվում է ամենաընդունելի տարբերակը ներկա պահին:

Տվյալների մշակումը է պետք է ներառի տրամաբանական սխալներ գտնելուն ուղղված խմբագրում.

- Խմբագրված տվյալների խմբում չպետք է լինի հակասություն ֆիլտրի և հիմնական հարցերի միջև:
- Չպատասխանված կետերը պետք է պահպանվեն և գրանցվեն: Այլ բաժիններից իմպուտացիա չպետք է արվի (տես՝ ԵՄ մոդելային հարցաթերթ):
- «Ապօրինի» տվյալների արժեքները չպետք է մտնեն վերջնական տվյալների խմբի մեջ, և ավելի նպատակահարմար է դրանց գրանցել որպես չպատասխանված կետեր:

2.7. Վարչական աղբյուրների օգտագործման վերաբերյալ քննարկում

Շահառուների հետ հանդիպումից հետո որոշվեց.

- Էկոնոմիկայի նախարարությունը տիրապետում է պատենտների և այլ մտավոր սեփականության իրավունքների (ՄՍԻ) մասին տեղեկատվությանը: Եթե տվյալների սպառողներին պետք է մտավոր սեփականության իրավունքների մասին տեղեկատվություն, ապա նրանք կարող են օգտվել Էկոնոմիկայի

նախարարության բազայից: Հետագա հետազոտություններում կարել է ներառել նաև մտավոր սեփականության իրավունքներին վերաբերող հարցեր:

- Ինովացիային վերաբերող տվյալները չեն կարող հավաքագրվել ռեգիստրներից կամ այլ վարչական աղբյուրներից. անհրաժեշտ է հատուկ հարցում իրականացնել կազմակերպություններում:

2.8. Քննարկումներում համապատասխան շահառուների ներգրավում

Ծրագրի շրջանակներում 2016թ. հունիսին նախանշված է ուսուցողական այց դեպի Ֆինլանդիայի վիճակագրություն, իսկ 2016թ. աշնանը՝ գործողություն 5.4-ը:

Քննակվեց և բոլորի կողմից ընդունվեց հետագա քայլերի ժամանակացույցը, որը դեռևս պետք է վերահաստատվի բոլոր մասնակիցների կողմից սույն առաքելությունից հետո:

Ֆինլանդիայի վիճակագրության կողմից ուսուցողական այցի ծրագրի նախագիծը կազմվել և բազմակողմ ընդունվել էր դեռևս 2016թ. հունվարի սկզբին: Սակայն առաքելության ժամանակ ի հայտ եկան այլ հիմանհարցեր, որոնք կավելացվեն օրակարգում.

- ՀՀ ԱՎԾ կողմից գարնանն իրականացված տվյալների հավաքագրման վերանայում, նախնական նկատառումներ և օրինակներ
- անդրադարձ հանրային ոլորտի ինովացիային և ֆիննական փորձառությանը ավելի վաղ կատարված փորձնական հետազոտությունից
- փորձնական տվյալների խմբագրման կանոններ

Վերոնշյալ կետերը կավելացվեն և թարմացված ծրագրիը կտրամադրվի ՀՀ ԱՎԾ-ին և ծրագրի համակագողին:

Ուսուցողական այցի օրերը որոշված են՝հունիսի 7-10-ը (երեքշաբթիից մինչև ուրբաթ):

Գործողություն 5.4-ի թեմայի շուրջ փոփոխություններ չեն կատարվել, չնայած որոշ հսկողություններ կքննարկվեն ուսուցողական այցի շրջանակներում ի թիվս խմբագրման կանոնների:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Ստորև ներկայացված է գործընթացի ամփոփումը նախքան գործողություն 5.4-ը.

- Վերջնական տեսքի բերել հարցաթերթը և ընտրանքը ԱԵ փորձագետների հետ քննարկումներ հիման վրա
- Պատրաստել տվյալների հավաքագրման բոլոր նյութերը ՀՀ ԱՎԾ սահմանված կարգի համաձայն
- Իրականացնել տվյալների հավաքագրումը մինչև մայիսի վերջը (ավելի մանրամասն ծրագիրը թողնվում է ՀՀ ԱՎԾ հայեցողությանը)
- Սահմանել տվյալերի խմբագրման կանոնները հունիսին կայանալիք ուսուցողական այցի ժամանակ
- Կատարել տվյալների խմբագրում և իմպուտացիա ըստ ՀՀ ԱՎԾ կարգացուցակի
- Ունենալ խմբագրված տվյալներ մինչ սեպտեմբերի վերջը

Հարկ է նշել, որ գործողություն 5.4-ի հաջողությունը կախված է տվյալերի հասանելիությունից:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք **ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15** **2016թ. փետրվարի 22-26**

Բաղադրիչ 5. Ինովացիայի վիճակագրություն

Գործողություն 5.2 Փորձնական հետազոտության պլանավորում

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ.

Պարտադիր արդյունքներ.

- Ներկայացված ինովացիայի վիճակագրություն (2017թ. հուլիս)

Չափանիշները.

- Նախագծված հարցաթերթ ինովացիայի վիճակագրության հավաքագրման համար (2016թ. փետրվար)
- Իրականացված փորձնական հետազոտություն (2017թ. հունվար)
- Վերլուծված թեստի արդյունքներ (2017թ. հունվար)
- Ներկայացված մեթոդաբանություն ինովացիայի վիճակագրության վերաբերյալ (2017թ. ապրիլ)
- Մշակված պլան կանոնավոր արտադրման և հրապարակման համար (2017թ. ապրիլ)
- ՀՀ ԱՎԾ վերապատրաստված անձնակազմ ինովացիայի վիճակագրության հարցերի գծով (2017թ. հուլիս)

11. Գործողության նպատակը.

- Հնարավոր ցուցանիշների ցանկի մշակում
- Նախագծված հարցաթերթի մշակում
- Թիրախային և շրջանակային համակցության նույնականացում
- Ընտրանքի նույնականացում
- Հետազոտության պլանավորում և նախագծում
- Տվյալների հավաքագրման մեթոդների նույնականացում
- Վարչական աղբյուրների օգտագործման վերաբերյալ քննարկում
- Քննարկումներում համապատասխան շահառուների ներգրավում

2. Գործողության սպասվող արդյունքը.

- Ցուցանիշները սահմանված են
- Հարցաշարը նախագծված է

- Թիրախային և շրջանակային համակցությունը նույնականացված է
- Ընտրանքը նույնականացված է
- Հետազոտությունը պլանավորված և նախագծված է
- Տվյալների հավաքագրման մեթոդները նույնականացված են
- Հաջորդ գործողության համար պլանավորված աշխատանքային ծրագիր (գործողություն 5.3-ը ծրագրված է 2016թ. հունիսին (ուսուցողական այց Ֆինլանդիայի վիճակագրություն))

3. Մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>

Բաղադրիչների ղեկավարներ
- Գագիկ Գևորգյան
- Նելլի Բաղդասարյան

Այլ աշխատակիցներ
- Անահիտ Նազարյան
- Աննա Հակոբյան
- Ալինա Գրիգորյան

<u>ԱԵ փորձագետներ</u>

Տկն. Մերվի Նիեմի, Ֆինլանդիայի վիճակագրություն
Պրն. Գեդիմինաս Սամուոլիս, Լիտվայի վիճակագրություն

<u>Գործողությունում մասնակից այլ շահառուներ</u>

Ներկայացուցիչներ
- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունից,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեից,
- ՀՀ գիտության ազգային ակադեմիայից

նույնպես կհրավիրվեն:

Հավելված 2.Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երկուշաբթի, առավոտ	Հյուրանոց/ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
	ՀՀ ԱՎԾ *Գրադարան*	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ընթացիկ իրավիճակի գնահատում և վերջին առաքելությունից ի վեր իրականացված աշխատանքների ներկայացում (ՇԵ) Սույն առաքելությանից ակնկալվող արդյունքների ներկայացում ՇԵ կողմից
Երկուշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Հնարավոր ցուցանիշների ցանկի մշակում Նախագծված հարցաթերթի մշակում
Երեքշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Թիրախային և շրջանակային համակցության նույնականացում Ընտրանքի նույնականացում
Երեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում շահառուների հետ	Հանդիպում շահառուների հետ
Չորեքշաբթի, առավոտ		Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Հետազոտության պլանավորում և նախագծում
Չորեքշաբթի, կեսօրից հետո		Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ և ՇԵ փորձագետների հետ	Տվյալների հավաքագրման մեթեդների նույնականացում
Հինգշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վարչականաղբյուրներիօգտագործմանվ երաբերյալքննարկում

Հինգշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում
		Չպլանավորված հանդիպումներ	Վեջնական պարզաբանումներ ՇԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ և առաջարկություններ հաջորդ գործողության համար և ՇԵ փորձագետների համար ենթադրվող աշխատանքային ծրագրի ներկայացում

Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ

ՀՀ ԱՎԾ:

- Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
- Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Նելլի Բաղդասարյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ
- Յուրիկ Պողոսյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Ալինա Գրիգորյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Աննա Հակոբյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Անահիտ Նազարյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Սիրանուշ Զեյնալյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Լիանա Շահբազյան, Ֆինանսների վիճակագրության բաժին
- Նաիրա Բաբոյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
- Սուսաննա Խաչատրյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
- Վարսիկ Սենեկերիմյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
- Վարդան Արևշատյան, Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժին

Արտաքին շահառուներ

- Քրիստինե Համբարյան, Մտավոր սեփականության գործակալություն
- Տիգրան Արզումանյան, ՀՀ գիտության ազգային ակադեմիա
- Արևիկ Խնկոյան, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե

ԹՄԽ աշխատակազմ

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգի մշտական խորհրդատու
- Սոնա Միրզոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ